ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-5-10

Թիվ 17/156
,,03,, սեպտեմբեր 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ղեկավարի կողմից 2017թվականի օգոստոս ամսվա ընդունված որոշումները և արձակված կարգադրությունը:

Առդիր ,, 7 ,, թերթից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» սեպտեմբերի 2017թվականի N 44 -Ա

## ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ,տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված N 1 և N 2 հավելվածների 8-րդ կետով,ատեստավորման հանձնաժողովի տեխնիկական աշխատանքները իրականացնելու նպատակով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 2017թվականի սեպտեմբերի 26-ի N 42-Ա որոշումը.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1.Լիազորված անձ նշանակել Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ՝ Գայանե Հովհաննիսյանին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2017 թվականի սեպտեմբերի 28
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» սեպտեմբերի 2017 թվականի N 43-Ն

## ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:

Հաշվի առնելով Արմավիր գյուղական համայնքի սեփականատերերի դիմումները՝ համաձայն հավելվածի

Հիմք ընդունելով ՝ Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 38 րդ հոդվածը, ՀՀ ԿԱ 17.09.2009թվ-ի N 1066-Ն որոշումը՝ ինչպես նաև Արմավիրի մարզպետարանի կողմից հաստատված բազմամյա տնկարկների հիմնման համապատասխան ակտերը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ

1. Գյուղատնտեսական ցածրարժեք հողատեսքից /վարելահող/ բարձրարժեք հողատեսքի /պտղատու այգի / փոխադրել Արմավիր գյուղական համայնքի սեփականատերերի հողատեսքերը՝ համաձայն հավելվածի
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2017 թվականի սեպտեմբերի 27
գ.Արմավիր

Հավելված

27.09.2017թվականի N-43-Ա որոշման

| հողամասի ծածկագիրը | հողամասի սեփականատերը | հողամասի մակերեսը /հեկտար/ | հողամասի նախկին հողատեսքը | հողամասի նոր հողատեսքը | ծանոթություն |
|---|---|---|---|---|---|
| 04-020-0161-0013 | Արմինե Հովհաննեսի Միրոյան | 0.12 հա | վարելահող | պտղատու այգի | |
| 04-020-0161-0012 | Արմինե Հովհաննեսի Միրոյան | 0.48 հա | վարելահող | պտղատու այգի | |
| 04-020-173-040 | Գայանե Բարսեղի Առաքելյան | 0.50 հա | վարելահող | պտղատու այգի | |
| 04-020-0111-0005 | Անժելա [illegible] | 0.52 հա | վարելահող | պտղատու այգի | |
| 04-020-102-008 | Խաչատուր Հրաչի Գասպարյան | 0.44 հա | վարելահող | պտղատու այգի | [illegible] |
| 04-020-0168-0001 | Վաչիկ Ներսեսի Դանիելյան | 0.40 հա | վարելահող | պտղատու այգի | |
| 04-020-0163-0004 | Գրիգոր Մանուկի Գևորգյան | 0.18 հա | վարելահող | պտղատու այգի | |
| 04-020-0166-0003 | Գրիգոր Մանուկի Գևորգյան | 0.43 հա | վարելահող | պտղատու այգի | |
| 04-020-0134-0013 | Արկադի Զավենի Մխիթարյան | 0.26 հա | վարելահող | պտղատու այգի | |
| 04-020-0142-0026 | Գոհար Հրանտի Հովհաննիսյան | 0.4776 հա | վարելահող | պտղատու այգի | |
| 04-020-0123-0006 | Կարեն Ավետիքի Առոյան | 0.556 հա | վարելահող | պտղատու այգի | |
| 04-020-0123-0005 | Կարեն Ավետիքի Առոյան | 0.556 հա | վարելահող | պտղատու այգի | |
| 04-020-124-002 | Կարինե Մարտինի Հովհաննիսյան | 0.19 հա | վարելահող | պտղատու այգի | |
| 04-020-130-011 | Լենա Համբարի Ալեքսանյան | 0.22 հա | վարելահող | պտղատու այգի | |
| 04-020-0143-0010 | [illegible] Սարգսյան | 0.22 հա | վարելահող | պտղատու այգի | |
| 04-020-0143-0009 | Հովանի Եսայու Սոլթանյան | 0.36հա | վարելահող | պտղատու այգի | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» սեպտեմբերի 2017 թվականի N 42 -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ և 46-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   ԵՄ՝

1. 2017թվականի հոկտեմբերի 27-ին ժամը 14-30-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի գյուղապետարանում անցկացնել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողների ատեստավորում
1/ Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-3/:
2/ Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /ծածկագիր 3.3-1/:
2. Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Գ. Հովհաննիսյանին ատեստավորման ենթակա համայնքային ծառայողներին ատեստավորումից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ տեղեկացնել ատեստավորման մասին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ա.Ֆ.Մարգարյան

2017 թվականի սեպտեմբերի 26
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

ՈՐՈՇՈՒՄ

«06» սեպտեմբերի 2017 թվականի N 41-Ա

## ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 1 ՓՈՂՈՑ ԹԻՎ 31 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԼԵՈՆ ՄԱՄԻԿՈՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմավիր գյուղի բնակիչ՝ Լեոն Մամիկոնի Հարությունյանի գ.Արմավիր 1 փողոց թիվ 31 հասցեում գտնվող,ժառանգության իրավունքով ձեռք բերված սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ դիմումը;.

Հաշվի առնելով, որ,հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում,ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով. և հաշվի առնելով որ գույքը բավարարում է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1՝Ճանաչել քաղաքացի Լեոն Մամիկոնի Հարությունյանի /ծնված 01.03..1959թ./, , գույքային իրավունքը ՝ճանաչելով նրա սեփականության իրավունքը Արմավիրի մարզ գյուղ Արմավիր 1 փողոց թիվ 31 հասցեում գտնվող 1200 քառ/մ օրինական հողամասի վրա գտնվող 1966թ-ին կառուցված՝ 159.6 քառ/մ, բնակելի տան, 52 12.5 քառ/մ աստիճանների 18.8, քառ/մ բաց պատշգամբի, 1970 թ-ին կառուցված 11.7 քառ/մ մառանի, 13.8 քառ/մ թոնրատան, 7.6 քառ/մ հավաբնի, 3 քառ/մ պահեստի, 13.4 քառ/մ ծածկի, 1998 թվ-ին կառուցված 51.6 քառ/մ պահեստի, 9.5 քառ/մ ծածկի և 1995 թ-ին կառուցված 12.1 քառ/մ պահեստի նկատմամբ

2 Ինքնակամ կառույց ճանաչել 2005 թվ-ին կառուցված 23.1 քառ/մ ծածկը, 2012 թվ-ին կառուցված 2.6 քառ/մ զուգարանը և 2017 թվ-ին կառուցված 37.2 քառ/մ ծածկը

2. Հողամասին կից 20 քառ/մ ավել զբաղեցրած հողամասը հատկացնել անհատույց սեփականության իրավունքով;

4.Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Լեոն Մամիկոնի Հարությունյանի սեփականության իրավունքը և տրամադրել անշարժ գույքի սեփականության վկայական.

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2017թվականի սեպտեմբերի 06
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» սեպտեմբերի 2017 թվականի N 40-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման,անշարժ գույքի՝ըստ դրանց գտնվելու և /կամ/տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին » N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 20-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին »թիվ 2 որոշումը.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի բնակիչ՝ Լևոն Մամիկոնի Հարությունյանին՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքով, պատկանող բնակելի տանը /ծածկագիր 04-020-049-013 / տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 1 փողոցի թիվ 31 տուն.

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝պետական գրանցման համար.

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում-ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ա.Ֆ.Մարգարյան

2017 թվականի սեպտեմբերի 06
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

„01 „ սեպտեմբեր 2017թ. N 06-Ա

## ՄԵՍՐՈՊ ՆԱՀԱՊԵՏԻ ՄԵՍՐՈՊՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգ սահմանելու մասին» N 1384–Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքի ղեկավարի տեղակալ՝ Մեսրոպ Մեսրոպյանի դիմումը.

## ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի տեղակալ՝ Մեսրոպ Մեսրոպյանին տրամադրել 2017թվականի ամենամյա արձակուրդը՝ 2017թվականի սեպտեմբերի 1-ից 14օր / 10աշխատանքային և 4լրացուցիչ օր տևողությամբ/:

2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի տեղակալ՝ Մեսրոպ Մեսրոպյանին աշխատանքի մեջ համարել 2017թվականի սեպտեմբերի 22 -ից:

3.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ՝ Մարինե Սարգսյանին՝ սահմանված կարգով կատարել արձակուրդի հաշվարկը:

4.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Արմավիրի համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2017թվականի սեպտեմբերի 1

. գ. Արմավիր